



տուժիւնն ալ ճիշդ հասարակութեան պէս՝ որոշ բան մը չը տեսներ, այլ միշտ ըլլալիքին կ'սպասէ:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐՆԵՐ

Վերջին հասնող եւրոպական թերթերէն Օսման բաշայի պատերազմացը վրայօք հետեւեալ մանրամասն լուրերը կ'ըսուին:

Պուրթէ 2 սեպտ. Օգոստ. 31 ին Բէլգիայի առաջը պատերազմին սկսաւ առաւօտեան ժամը 6ին և տեւեց մինչեւ երեկոյեան ժամը 4: Տաճկաց թիւը 25.000 էր. Սկալինսայի և Փիշապի դէմ քանի մ'անգամ յարձակելով ետ մղուեցան ռուս զօրքերէն, որք վերջապէս յարձակողական սկսելով մինչև Բէլգիան քշեցին տաճկներն: Ռուսաց կորուստը 600ի մօտ է:

—Պուրթէ 4 սեպտ. (Օսման բաշա երէկ Ռուսաց և բուսնիներուն ամրացեալ զիրքերուն դէմ յարձակում մ'ընելով, երեկոյեան ժամը 3ին ռուսական թիղանօթներէն ետ մղուեցաւ: Տաճկի արձակամարտներն (չարքաճ) մեծ կորուստ կրեցին:

Տաճկներն երէկ երեկոյ ժամը 4ին Ռուսաց և բուսնիներուն ամրացեալ զիրքերուն դէմ մ'սկսան ճրրճօվայի դէմ, ռուս մ'իյնարով տան մը վրայ և հոգի սպաննեց: Սյոպօզիայի ռուսական մարտկոցներն ալ կէս ժամ վերջը պատասխանել սկսան, և այսպէս երկուստէք ուժգին ռմբակոծութիւն մը մինչև կէս գիշեր տեւեց: Այս առաւօտ Ռուսք Սյոպօզիայէն 21 ռուս արձակեցին Տաճկաց մարտկոցներուն վրայ, որք լուս կեցան:

—Կորնի-Սթուտէի 1 սեպտ. Տաճկներն երէկ առաւօտէ բազմաթիւ զօրք գւգմարել ըսկըսան դէպ ի կապրօվայի եւ Տանքէօյի սեղանթեամբը, միւս կողմէն պահան 8 վաշտ օսմ. զօրք հեծկազօրով՝ Ռուսաց քի և Բազկրատի մէջ տեղի համախրմուելով, Գատըքէօյի դէմ յարձակման սկսան:

Երեկ Բէլգիայի օսմ. բանակը մեծ զօրութեամբ Փիշապի ռուսական զիրքերը զարնել ըսկըսեց. ժամը 11ին տաճկներն դեռ ուժգին թիղանօթաց եւ հրազինաձգութեան ձայնը կը լսուէին: Կրեկոյեան ժամը 3ին Չոթօֆ զօրապետը հետեւեալ հեռագիրը քաշեց. —Տաճկաց հեռագրի տեքստը ըրած յարձակումներն քաջութեամբ ետ մղուեցան: Շիրկայի մէջ ամեն բան խաղաղ է: Առնուած տեղեկութեանց նայելով, Սիւլէյման բաշա մեծ կորուստ ունեցեր է Շիրկայի դէմ ըրած պարզիւն յարձակմանցը մէջ:

Պալքանի անցքերը դեռ Ռուսաց ձեռքն են:

—Գուրագիլէէն կ'հեռագրեն թէ 24ին բուսնական բանակին առաջին զօրագունդն Գանուբն անցեր է: Հրամանատարը, իրեն թիկնապահ Ռուսանու հարիւրապետին հետ առաջինը եղեր է գեան անցնելով ուրք օսմ. հողին վրայ դընդը: Զօրքերն լաստանաւերն հեծնալու առննին, Հուրրա՛, կեցցէ՛ Բուսնիա կաղաղակին:

Անմիջապէս յառաջապահներ գրուելով, կէս գիշերուան լուսինն լայսովը 60ի շարք Պաշը պօղուքներ կ'տեսնուին մօտերը: Խիւրի Ռուսանու հարիւրապետը 21 ձիւորով թշնամոյն վրայ յարձակելով կուր մը կըսկըսի, հարիւրապետին ձին վերադարձելով կիսայ, խիւրի ընկողնովը սպաննած պաշը պօղուքի մը ձիւն վրայ ցածկելով կուր կ'շարունակէ, և թըշնամին ետ կ'մղէ: Այս առաջին կուսին մէջ Ռուսք 6 մեռեալ և 8 վիրաւոր, իսկ Պաշը պօղուքներն 17 մեռեալ և 21 վիրաւոր կ'ունենան:

—Առջի օր Ղալաթիոյ հըրապարակին վրայ պատած զըրոյց մը կ'հրատարակէր Լեւանթ ոյն օր դեպքանտանէ մը հազարդուեր է եղեր, և որոյ նախելով Նիքոսի բերդաքաղաքը՝ զրքը պաշարող և ռմբակոծող բազմաթիւ Գարատաղցի զօրաց և Հէրսէքցի պատասխան ձեռքը անձնատուր եղեր է: Այս լուրն ստուգուած չէ:

—Լանարայի կօրս թերթը Շիրկայի կիրճին զինուորական կացութիւնը հետեւեալ կերպիւ կ'ընահատէ.

Կուզէ իրենց թափած անդուլ ճիգերէն յոգնած ըլլալով, հանգստութեան պէտք ունենալուն համար և կամ թէ իրենց նպատակին չ'կրնալ հասնելու համար զամբ եղած ըլլայ, առ այժմ երկու բանակները Շիրկայի մէջ անշարժ կ'իկնան: Ռուսաց նպատակը եղող մէկուն վկայութեանը նայելով, կերևայ թէ Շիրկայի կիրճերուն մէջ այս շարթու տեղի ունեցած կռուին վրայ Սիւլէյման բաշայի տուած պաշտօնական տեղեկութիւնը խիստ ճըշդիւ խմբագրուած է, կապրօվայի վրայ թշնամին ոտնակոխ չ'կրնալ ընելը կ'խօստուլանի, բայց միւս կողմէն ալ կիրճին բերանը այնպիսի զիրք մը ձեռք ձգեր է, որմէն անոր հիւսիսային կողմը գտնուած տեղերը կախումն ունին և առավ Ռուսաց այդ կիրճը գրաւելը օգուտ մը չ'ընէր: Ռուսաց զօրապետը աններկի անփութութեամբ մը կիրճին վը-

րայ գտնուող մէկ քանի լեռներուն տիրելու մուցեր է և որոց պէտքը Օսմանցիք աւելի ազէկ զգալով խիւրի գրաւեր են:

Հոտ է որ Ռուսք հեռագրեալէ կատարի յարձակումներ ընելով, ճակատամարտը սուկայի եղաւ: Բայց վերջապէս Օսմանցոց հաստատումով լուրը գերազանցեց և թշնամին մեծ կորուստով ետ մղուեցաւ: Շարթու օրը տեղի ունեցաւ այս և Օսմանցիք իրենց ձեռք բերած յաջողութիւնէն խրախուսեալ, հետեւեալ օրը յարձակողական զիրք բանեցին և ստիպեցին ռուսերը որ իրենց բերդերուն ետեւ ապաստանին: Անկէ ի վեր չ'կարծուիր որ ճակատամարտը նորէն սկսած ըլլայ, թէպէտ առաւել կամ նուազ կարևոր ռմբակոծներ և զննութիւններ տեղի կ'ունենան միշտ: Կօսնի Սթուտէի խիւրաւած ամենէն նոր տեղեկագիրը կ'ըսէ թէ Շիրկայի զօրաց Ռուս հրամանատարը ճիշդ չ'գիտէր թէ Օսմանցիք նոր յարձակում մը չ'ընելու մտադիր են թէ ետ քաշուելու, կամ չէ նէ ռուսերը պաշարելու կ'ստարաստին: Սիւլէյման բաշա միւս կողմ թուականաւ կ'հեռագրէ թէ ինքը թշնամին պաշարելու վրայ է և թէ ընել տուած զննութիւններէն տեղեկացեր է որ Ռուսք կապրօվայէն 3 ժամ հեռու զօրութիւն համախրեւ են: Սիւլէյման բաշայի առաւ այս վերջին տեղեկութիւնը կ'ապացուցանէ թէ Օսմանցիք այնքան լուրջ մը բռնած են Շիրկայի մէջ որ կրնան զօրաց փոքր շտապներ ալ կամովին ճամբայ հանուիլ Պալքաններու հիւսիսային կողմը զննելու համար, թէպէտ Ռուսաց զօրապետը չ'են հալածած, բայց թիւրապի վրայ շարժում մ'ընելու համար կիրճը չ'կրնար գործածել:

—Քանի մը օր առաջ այս պատերազմներէն, որոնց մէջ Օսմանցիք առաջին անգամ յարձակողական զիրք մը բռնելու սկսան, Տէյի Նիւրի թղթակիցը Բօրիտիլէն, որն օր Օսման բաշայի դէմ գործողութիւն բնու կ'ընելու բանակաւ կ'երթնէ է, հետեւեալը կ'գրէր: «Օսմանցիք ռուսերէն աւելի շատ և շուտ օգնութիւն ստացան, ստոյգ է որ ամբողջ գծին վրայ յարձակողական պիտի սկսեն: Ասկէ ուրիշ բան մը ռուսաց վտանգաւոր կացութեանը վրայ աւելի ճիշդ գաղափար մը չ'կրնալ տալ: Ռուսական բանակաւեղանը գրտնուող թղթակիցները զօրաց թիւը և ոչ տեղ մը յիշատա-

կելու չեն կրնար համարձակել: Խստիւ արգիւտած է իրենց այդ, վախնալով որ չի գան Տաճկաց տեղեկութիւն հազարգեն, մինչդեռ քանի մը շարթու առաջ թորը շարժումները տեղեկագրելու ազատ էին: Բէլգիայի ճակատամարտին վերջը իրենց բռնած յանդուգն յարձակողական զիրքը թողով զգոյշ պաշտպանողական զիրք մը բռնելու սկսան և կ'ըզան որ Օսմանցիք ամեն կողմէ և ամեն կէտէ կ'սպառնան իրենց: Բէլգիայի դէմ նոր յարձակում մը միտքերուն անգամ չ'են անցուներ: Իրենց զիրքերը կամրայնեւ և կերեւայ թէ եթէ Տաճկաց կողմէն յարձակում կուս մ'ըլլայ, յուսահատ դիմադրութիւն մընել որոշած են, բայց նորէն յարձակողական զիրք բռնելու վրայ, դէթ այս միջոցիս բնաւ երբէք չ'են մտածեր: Իրենց օգնութիւնները խիստ յամր կերպով կ'հասնին և թէպէտ Բէլգիայի ճակատամարտին ի վեր ռուսական 3 կամ 4 զօրաբաժիններու Գանուբէն անցնելը ճանաչուեցաւ, սակայն ևս չ'կրցայ իմանալ մինչև հիմայ որ գային և ինչ եղան արտօք:

ՀԵՌԱՊՐԱՒՈՒՐԵ

Պորտոյի մէջ քաղաքապետին ըրած մէկ ատենախօսութեանն ի պատասխանի, Մաքր-Մահօն մարտախօսը ու յայտարարութիւնն ըրաւ:

«Ապահով եղէք որ խաղաղութիւնը բնաւ չ'պիտի խոնգարի, և երբ երկիրն իմ հրաւերիս պատասխանելու ըլլայ, Սահմանադրութիւնը, առ որ յարեալ էք և որոյ ես հաւատարիմ պաշտպանն ու պահպանը պիտի ըլլամ, անարգել պիտի գործէ ազգային բարօրութեան բարգաւաճումն ապահովելու համար:

ՉԻՆՈՐԱՅԻՆ ԾԱՐԺՈՒՄՆԵՐ

Երէկ Ղալաթիոյ հրապարակին վրայ տարածուած զրոյց մը, որն որ դեպքանտանց մէկէն հազարդուած է եղեր, կը սէ թէ Ռուսիոյ Զարը Գերմանիոյ կայսեր նոմակ մ'ուղղել է, որոյ մէջ կ'յայտնէ եղեր որ այս անգամ Բէլգիայի առաւ (Իմէ առնէ)՝ այս տարուան պատերազմին աւարտը պիտի համարէ, այլևս յառաջիկայ գործնան պատերազմի ասպարէզիլնել խոստանալով, եթէ մինչև այն տեղի թորքիա իր ընդդիմութիւնը շարունակել ուզէ: —Պալքանի հրամանատար Սիւլէյման բաշայէն օգոստ. 30 թը-

ուով հասն... թէ, յա... տուժիւն... կուած... կու թ... դէպ ի... թրնօվ... լուծա... մեղն շ... տիրել... աջաց... միանա... Ս.յս... յետոյ... ձիւոր... քն վ... տակայ... տանել... հետ գ... ներն ո... բուն վ... ուն մէջ... այ թշ... նակաղ... պուի... թուլով... Բազ... տաճկաց... լուծայի... դուելով... պաշապ... նէչներ... բաւակ... բուի... Հեւ... ձեր: թ... ճանբան... է: Գալ... կ'յարէ... խընթաց... թեան... կուր մ... —Պա... բաշայէ... նաւ հա... ծանուց... ռուսակ... օսմ. յա... վրայ յ... բակի մ'... և երբ Օ... կըսին թ... ինչ 2 վ... թեան հ... յիները... միջապէ... կուելով... կուրը կ... ռուսք չ... նալ տաճ... կորուս... նոյն օրը... ընել ար... 131 վաշ... ձիւոր ն... է ռուսաց... —Թայ... վր Սիւլէյ... լու թիւնը

ուով հասած հեռագիր մը կըսէ թէ, յարձակողական հետազոտութիւն մ'ընելու համար զբրկուած խումբ մը օմ: զորք երկու թևի բաժնուելով, մէկը դէպ ի ձախը կ'յառաջանայ և թրնօլոյի ճանաչումը վրայ Պուզլուճա բլրոյն գաղափար թշնամոյն շինած ամբողջութիւններուն տիրելէն յետոյ, ալ կողմէն յառաջացող միւս թևին հետ կը միանայ:

Այս երկու թևին միանալէն յետոյ, թշնամոյն հետեւակ և ձիււոր զորքերը իրենց գիրքերէն վաճառելով կ'երթան մասկոյ անտառի մը մէջ ապաստանելու: Տաճկաց բանակին հետ գտնուող Չէրքէս ձիււորներն ու հետեւակներն ուսուցողներն վրայ կ'յարձակին անտառին մէջ, 3 ժամ կ'առեւելն յետոյ թշնամին դէպ ի իւր բանակազատը քաշուելու կ'օտարուի: Բաղնիսի գիւղերը թողնուած անտառին մէջ:

Բաղնիսի գիւղէն և ձիււոր տաճկաց ձեւքը կ'իյնան: Պուզլուճայի ամբողջութիւններն քանդուելով, օսմանցոց ալ թևը պաշտպանելու համար նոր պատնէշներ կ'իյնուին, և ստանց մէջ բաւական թուով զինուոր կ'ըրուէ:

Հետազոտիչ խումբը նոյն անո՞ր անտառէն ետէ գարձեր: Թրնօլոյի վերջի շէտը հանքան այժմ օսմանցոց ձեւքն է:

Գալով բուն մեր բանակին, կ'յարբէ Սիւլէյման բաշա, նախընթաց օրերուն վրայ՝ այսօր աւելի սաստիկ բռնակոծութեան և հրաղինաճգութեան կռիւ մը տեղի ունեցաւ:

— Պատմութի հրամանատար բաշայէն օգոստ. 29 թուականու հասած հեռագիր մը կը ծանուցանէ թէ նոյն առաւօտ ուսական 2 յսկատ հետեւակ օմ: յառաջագահ գիրքերուն վրայ յարձակելով, ուժգին կըրակի մ'առջեւէն ետ կ'մղուին, և երբ Օսմանցիք հարածել կըսկըսին թշնամին, ուսական ուրիշ 2 վաշտ հետեւակ օգնութեան հասնելով կոկոսն օսմանցիները թնդանօթի բռնելը Անմիջապէս կանոնաւոր զորք զըսկուելով տաճկաց օգնութեան, կռիւը կընդհանրանայ, իսկ ուս. ք չկրնալով երկար դիմանալ տաճկաց ուսմանցիներ, մեծ կորստով հտ կ'քաշուին: Միւսնոյն օրը հետազոտութիւն մը ընել արուելով, կիմացուի թէ 15 վաշտ հետեւակ և 4 գունդ ձիււոր նոր զորութիւն հասեր է ուսաց:

— Թայմիլի ուղղեալ նամակ մը Սիւլէյման բաշայի նկարարութիւնը կըսէ:

«Սիւլէյման բաշա շատ համեստ և զգաստ մարդ է, կըսէ իւր բանակակերպունը չ'եմանիր, երբէք այն իրմէն նուաղ արժանաւոր ուրիշ խել մը հրամանատարներուն պէրճ ու զիսաւոր բանակակերպուններուն:

Իւր վրանը կ'բողոքանայ իր կուցիցի վրայ ցցուած պարզ կանանչ կառէ մը, որու տակ կ'մտնէ ամեն երեկոյ, և բաց դեմնին վրայ կ'պառկի: Ոչ պահագան ունի և ոչ բան մը, այլ իր 2-3 թիկնապահներն փոխախալի կ'հսկեն իւր շուրջը: Իր 2 ձիւրը վրանին առաջը մէկ ցիցի կապուած կ'կենան կազմ պատրաստ:

Սիւլէյման բաշա 40-45 տարեկան անձ մն է բարձրահասակ և կորովի, դէմքը դմնեայ և խորշակաւ (արեւէն այրած), ճակատը խորշումած, դեղնագոյն կարճ մորուք մը և պիտ մ'ունի: Փոքր ինչ զաղք կը խօսի, վարմունքը խիստ պարզ է, բայց իւր բնաւորութեանը հետ, որ իւր վրայ մեծ վստահութիւն մ'ունենալ կ'արտայայտէ, տարօրինակ հակապատկեր մը կ'ընծայէ:

Բանակի կազմակերպութեան մասին մեծ փորձառութիւն ունի, պաշարի և մթերքի պլտոյից մասին արագ բնութեամբ, և հրամանատարութեան յատուկ հանգամանք մը, առանց արդէ ազգաբնակչութեան սովորական մեթոտներուն և կերպերուն հետեւիլ ուղիւ, բլան մը կրնայ ամենայն յաջողութեամբ և արագութեամբ դործադրել:

Առ այս բաւական է յիշել թէ Սիւլէյման բաշա կրցած էր իր բանակն Էտրնէէն 48 ժամու մէջ մինչև Գարաբունտը հասցնել: Եթէ ուրիշ բանակաց մէջ սովորաբար դործածուած դրութեանը հետեւէր, անկարելի էր իրեն ամեն տեղ որոշ և ճիշդ հրամաններ տալ, և ստանց ճշգրտագէս դործադրուելուն վրայ վստահ ըլլալ եւ այս բանին մէջ է որ Սիւլէյման բաշա միւս հրամանատարներէն կ'տարբերի:

Գոյ Մալ կապէթ ալ հետեւեալ կերպիւ կ'ըրացնէ սոյն նըկարագիրը:

«Սիւլէյման բաշա՝ կըսէ՝ սօֆթայտ թենէ յաւալ եկած է, որ այնքան եւանդեամբ Հօճայի տաճանելի տաննը պարապեր է, որ քիչ տանի մէջ տարօրինակ հմտութեան համարում մ'ստանալով, կ'հաստատէ զայդ ճարտասանութեան վրայ դործ մը խմբագրելով: 14 տարեկան երբ կըլլայ, թողնուող պարտքը զինուորական տագարէզը կ'ընէ, և անգամ մը բա-

նակին մէջ մանելուն պէս՝ քիչ տանէն հաղարագեալի աստիճան կ'ստանայ:

Եւր եւմէնի արշաւանացը կ'ձեռնարկէ Բ. Գուռը, Սիւլէյման բաշա օրէնագէտ ըլլալուն համար բանակին հետ միասեղ կ'ըրկուի: Վերագարձին բանակաթիի զինուորական վարժարանին վերատեսուչ կանուանի, ուրիշ իւր նախանձորդն Բէտիֆ բաշա առնելով զայն նախ Սերվիս Ետայ Տուկայի կիրճերը կ'ըրկէ, որ զնտակներն կարկախ պէս կ'տեղային, բայց յաջողութեան մը յոյսերու սով կ'ախրէր: Ճարպիկ զորագետ մը ըլլալու համարուն հետ միասեղ, պակասութիւն մ'ունի, կըսեն, որ դիւրաւ իւր պաշտօնակիցն եղող միւս զորագետաց հետ չ'համաձայնիր:

— Նիքիսի առնուած ըլլալուն լուրը թէպէտ պաշտօնապէս չէ հաստատուած, բայց դեպքանական ախուսներուն մէջ հաստատութիւն կ'գտնէ, կըսէ Լեանիմ:

Ա Ջ Պ Ա Յ Ի Ն

Երէկ փախաղան Ս. և Բրիտանացի Էֆէնիներն ու Նոր Դարու խմբագիրը վերջտախն կանչուելով Ոստիկանութեան դուռը, փաշային ներկայացրէ, և Ղալաթիոյ Օճախն գոյութեանը և էսթրիկներուն վրայօք բացատրութիւն տալու հրաւիրուեր են:

Ասոնք ցոյց տալու համար թէ իրենց դէմ եղած այս ամբաստանութիւններն թշնամութեան մ'արդիւնք են, որոցմէ որ կ'կտակածին թէ եղած է այդ չարախօսութիւնը կամ մտանութիւնը, ատանց դործերն յառաջ բերելով, Ագապեան վարժարանի մէջ փանտեանի գործած զեղծումներն ու կասկածելի ընթացքը, Պատրիարքարանի մէջ փոխանորդին գործած զեղծումները և Գարթալի մէջ ալ ատենապետ Պաղտիկ աղային բրած բռնութիւնները ընդարձակօրէն նկարագրելու են, սակէ եզրակացնել ուղղելով թէ իրենք այս զեղծմանց դէմ խըստիւ խօսած ու գրած ըլլալուն համար է որ ստանք ալ այժմ զիրենք զբարտեւելու ելած են:

Փաշայն պատասխանելով թէ ինքն իրենց աղղային ներքին գործոցը չուզեր միջամտել, վրանին կասկածուած քաղաքական յանցանքներն քննելու եւ բնութեւ պաշտօն ունենալը կը յայտնէ, և ուրիշ անգամ նորէն կանչելով հարցաքննելու պայմանաւ կ'արձակէ զանոնք:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐՆԵՐ

Վեհ. Սուլթանը Պ. Թիկիսի

տիկնոջը վշտակցութեան գիր մ'ուղղիր է:

— Վեհ. Սուլթանին հետ գերմ. դեսպանը, վերջին մէկ տեսակցութեանը մէջ, վերաւորեալ զօրաց հիւանդանոցներուն վիճակին առթիւր կ'յայտանէ թէ 1879ի պատերազմին ալ Գաղղիացիք հիւանդներն զնելու տեղ չ'ունենալով, մասնաւոր պարագաներ շինելու և վորձով տեսեր էին թէ այդ բաց օղին տակ հիւղակներու մէջ դարմանուող հիւանդներն աւելի շուտ առողջացեր են, կ'առաջարկէ որ հոս ալ միևնոյն բանն ընեն:

Վեհ. Սուլթանը զարմացմամբ հաճութիւն կ'յայտնէ և այդ հիւղակներուն մէկ ճօշկը կ'ինզրէ դեպքանէն որ տայ, զայդ բժշկական ժողովոյն քննութեանը յանձնելու համար:

ՎԵՐՁԻՆ ԼՈՒՐՆԵՐ

Այս գիշեր հրատարակուած պաշտօնական հեռագիրներն կը ծանուցանեն թէ, օգոստ. 28ին Բահայի առաջը ուժգին ուրմբակոծութիւն մը տեղի ունենալով կառավարութեան խօնախըն և արիշ քանի մը շէնք կործանելու և 2 հօգի ուղէն վերաւորուեր են:

— Միւսնոյն օրը Գալաթաթէն ալ վիտիւր ումբակոծութեան բռնելով առտուրնէ մինչեւ երեկոյ, կառավարութեան խօնախն ու քանի մը շէնքեր ումբերէն վստաւեր ու քանի մը հօգի վերաւորուեր են:

— Վագթ մասնաւոր լրէ մը առնելով կըսէ թէ, Ահմէտ Էյուպ բաշա Լօսի գաշտին մէջ մեծ կտորած մը (2000ի չափ կորուստ) տալով թշնամոյն, ուսուցիչուսուցիչ շիշակայք բորովին պարպելու ու դէպ ի Պիէլա սկսել են քաշուիլ:

Մէհմէտ Ալի բաշա ալ Պիէլայի ճանքուն վրայ հետազոտութիւն մ'ընելով, մէկ հաս ուս չէ գաեր:

Օսման բաշայի բանակին ալ բողբովին ուսմանը պաշարուած ըլլալու զրոյցը մէջ բերելով կըսէ թէ, Բիէլայի գիրքը այնքան զիւրաւ չ'ընար պաշարուել:

— Կարսի բանակէն 300ի չափ Գարաբաք ձիււորներ մինչև կ'ուսիլ յառաջանալով խաղախներու հետ կ'ուսի մը կ'ընուին, 150էն աւելի ձի յաջողակելով, հետագրազ ձիւն ալ խղիլէն յետոյ նորէն կ'արս կ'գառան:

— Գաաբգի զի առաջը վառօք և զէնք լեցուն հերկնական նաւ մը բռնուեր է:

— Պարսկաց Նասրէտալին Շահը ուղղակի հեռագրաւ Վեհ. Սուլթանին գահակալութեան տարեդարձը շնորհաւորեր է:

— Մերվիոյ պատերազմի պատրաստութեանցը դէմ Բ. Գուռը խիստ շքա մը զրկել է:

— Մէլիմիէի զօրանոցին մէկ մասը 2500 անկողնով հիւանդանոցի վստարկուեր է:

